

### 4.3.2. Ներքին զբոսաշրջություն

Ըստ կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների՝ 2007թ. հունվար-հունիսին հանրապետության տարածքում տեղաբաշխված կոլեկտիվ և անհատական զբոսաշրջիկների տեղավորման միջոցներում (կացարաններում) տեղավորվել են 38077 զբոսաշրջիկներ (ՀՀ ռեզիդենտներ), ինչը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 24.3%-ով:

#### Ներքին զբոսաշրջությունն ըստ նպատակի

(մարդ)

	2006 թ. հունվար-հունիս	2007թ. հունվար-հունիս	Աճի տեմպը, %	Տեսակարար կշիռը, % (2007թ. հունվար-հունիս)
<b>Ընդամենը զբոսաշրջիկներ <sup>1</sup></b>	<b>30633</b>	<b>38077</b>	<b>124.3</b>	<b>100.0</b>
որոնցից ըստ նպատակի՝				
գործնական	10358	13798	133.2	36.2
հանգստի և ժամանցի	15291	17569	114.9	46.1
բուժման	1418	1877	132.4	4.9
այլ	3566	4833	135.5	12.7

<sup>1</sup> Տվյալներն արտացոլում են միայն հյուրանոցներում, հյուրանոցային հանգրվաններում, առողջարաններում, հանգստյան տներում հաշվառված զբոսաշրջիկներին: